ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 հուլիսի 2025 թվականի թիվ 174–Ա

ԳԵՂԱՄ ՇԱՄԻՐԻ ՓԻՐՈՒՄՅԱՆԻՆ «ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԳԵՏԱՀՈՎԻՏԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության «Առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի օրինակելի կարգը և նրանց հետ կնքվող աշխատանքային պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի 992-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 129-Ն որոշման 85-րդ կետով, հիմք ընդունելով «ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի ենթակայության Գետահովիտի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի հանձնաժողովի 2025 թվականի հուլիսի 24-ի թիվ 3 որոշումը և Գ.Փիրումյանի 2025 թվականի հուլիսի 24-ի դիմումը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

Գեղամ Շամիրի Փիրումյանին 2025 թվականի հուլիսի 28-ից նշանակել «ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի ենթակայության Գետահովիտի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում և կնքել աշխատանքային պայմանագիր երեք տարի ժամկետով :

Հ. ՂԱԼՈՒՄՅԱՆ

2025-07-28 13:44:01 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

2025թ. հուլիսի 28
ք.Իջևան